



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

”19” հուլիս 2013 թ.

թիվ 20 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱՆԵՐԻ
ԱՄՓՈՓԱԳԻՐԸ, ԹԱՂԱՄԱՍՈՒՄ (ԶԱՆԳՎԱԾՈՒՄ) ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ
ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել՝

1. ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում ցուցակագրման տեղամասում տնտեսությունների ցուցակների ամփոփագիրը՝ համաձայն հավելված 1-ի:
2. ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում թաղամասում (զանգվածում) տնտեսությունների ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
3. ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում տնտեսությունների ցուցակների կազմման հրահանգը՝ համաձայն հավելված 3-ի:

Ձև թիվ 1 – Աղյուսակ 1

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր
Ցուցակագրաման տեղամասում տնտեսությունների ցուցակների

Մարզ -----Տարածաշրջան-----Համայնք-----
(քաղաք/գյուղ)

Ցուցակագրաման տեղամաս -----

Տեղամասում թաղամասերի քանակը-----

Նմուշային համար	Թաղամասի (զանգվածի) համարը	Թաղամասում տների քանակը	Դրանցում տնտեսությունների քանակը	Տներ, որտեղ տնտեսություններ չեն բնակվում	Տնտեսությունների քանակը, որոնք ունեն			
					տնամերձ և/կամ գյուղ. նշանակության հողեր	տնամերձ և/կամ գյուղ. նշանակության հողեր այլ համայնքներում	գյուղատնտեսական կենդանիներ	գյուղ. տեխնիկա
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
Ընդամենը								


Ցուցակագրող -----
(ստորագրություն)

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու ----- «-----» ----- 2013թ.
(ստորագրություն)

h/h	Հասցե	S/S գլխավորի կամ սեփականատիրոջ ազգանուն անունը	Տնամերձ և/կամ գյուղ. նշանակության հողերի առկայությունը՝ անկախ սեփականության ձևից	Տիրապետման և օգտագործման տեսակը՝ <i>սեփական հող, որը մշակվում է - 1, փրված է վարձակալության - 2, վարձակալված հող - 3</i>	Գյուղատնտեսական կենդանիների առկայությունը				Գյուղ. տեխնիկայի առկայությունը	Տնամերձ և/կամ գյուղ. նշանակության հողերի առկայությունը այլ համայնքներում	Ծանոթություն
					խոշոր եղջերավոր անասուններ	խոզեր	ոչխարներ և այծեր	թռչուններ			
1.	Ա.	Բ	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.

Ցուցակագրող -----
(ստորագրություն)

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու -----
(ստորագրություն)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հավելված 3

Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2013 թվականի հուլիսի 19-ի թիվ 20-Ա որոշման

**ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական
համատարած հաշվառում**

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

**ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ**

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համայնքում (քաղաքային/գյուղական) տնտեսությունների ցուցակների (Ձև թիվ 1-Աղյուսակ 2) և այդ ցուցակների ամփոփագրի (Ձև թիվ 1-Աղյուսակ 1) կազմումը հանդիսանում է գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման հիմնական աշխատանքներից մեկը:

Տնտեսությունների ցուցակներն անհրաժեշտ են.

1) համայնքների տարածքները հաշվային, հրահանգչական և հաշվառման տեղամասերի սահմանագատելու,

2) գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում տնտեսությունների հաշվառման ամբողջականությունն ապահովելու և կրկնակի հաշվառումը բացառելու համար:

2. Տնտեսությունների **ցուցակները (Ձև թիվ 1-Աղյուսակ 2)** կազմվում են մեկ օրինակից՝ հատուկ այդ նպատակով հրահանգավորված աշխատողների՝ ցուցակագրողների կողմից տները (շինությունները) շրջագայելու միջոցով: Ցուցակագրողներն աշխատանքի ընթացքում պետք է ապահովեն իրենց հատկացված ցուցակագրման տեղամասի ամբողջական ընդգրկումը:

Աշխատանքներն իրականացվում են մեկ ամսվա ընթացքում՝ **սկսած 2013 թվականի հոկտեմբերի 1-ից:**

3. Մինչև տնտեսությունների ցուցակների կազմումը ցուցակագրողը պետք է հրահանգավորվի, այնուհետև ծանոթանա ցուցակագրման իր տեղամասին՝ համեմատելով այն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) տարածքային ստորաբաժանման կողմից նախապես իրեն հատկացված ցուցակագրման **տեղամասի** սխեմատիկ հատակագծի հետ:

4. Տնտեսությունների ցուցակները՝ **Ձև թիվ 1 - Աղյուսակ 2**, կազմվում են ըստ առանձին թաղամասի (գանգվածի)՝ յուրաքանչյուր թաղամասի տները, որտեղ բնակվում են տնտեսությունները, շրջագայելով և դրանք ըստ համարների հաջորդականության գրանցելով: **Մեկ ցուցակում երկու կամ ավելի թաղամասերի տվյալները գրանցել չի թույլատրվում:**

5. Սույն հրահանգում **օգտագործված հասկացությունները կիրառվում են միայն վիճակագրական նպատակով:**

6. **Տուն** (շինություն) համարվում է ինքնուրույն շինարարական համակարգը, որն ունի առանձին փոստային (թվային, տառային) համար, օրինակ՝ 7, 11/2, մասնաշենք Ա և այլն:

7. **Թաղամաս (գանգված)** համարվում է բնակավայրի կառուցապատված տարածքի այն մասը, որը սահմանագատվում է փողոցներով, հրապարակներով, նրբանցքներով, անցուղիներով և այլնով: Եթե բնակավայրում առկա է նաև գանգվածային կառուցապատում՝ սահմանափակված ազատ (չկառուցապատված) տարածքով, ապա ցուցակներն

այդտեղ կազմվում են յուրաքանչյուր առանձին զանգվածի համար: Պարզ արտահայտված թաղամասային (զանգվածային) կառուցապատման բացակայության դեպքում բնակավայրի տարածքն անհրաժեշտ է բաժանել պայմանական թաղամասերի (զանգվածների), դրանք համարակալել և յուրաքանչյուրի համար կազմել առանձին ցուցակ:

8. Տնտեսությունների ցուցակները փողոցներով կազմել թույլատրվում է միայն բացառիկ դեպքում, երբ բնակավայրը բաղկացած է մեկ կամ մի քանի զուգահեռ փողոցներից: Ընդ որում, եթե հնարավորություն կա փողոցը բաժանել մասերի նրբանցքներով, անցուղիներով և այլնով, ապա հարկավոր է յուրաքանչյուր այդպիսի մասի համար կազմել առանձին ցուցակ:

9. Տնտեսությունների ցուցակները կազմելիս ցուցակագրողը ճշտում է իր տեղամասի սխեմատիկ հատակագիծը, ավելացնում նոր կառուցված ու կիսակառույց շինությունները և ջնջում քանդվածները: Բնակավայրի սխեմատիկ հատակագծի վրա թաղամասերը և զանգվածները նախօրոք համարակալված կլինեն տվյալ բնակավայրի սահմանում հերթական համարով, որը ճշգրտվում է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունների տարածքային բաժնի պատասխանատու անձանց կողմից:

10. Ցուցակագրողը տնտեսությունների ցուցակներում պետք է նշումներ կատարի նաև շրջագայության ժամանակ իր տեղամասում հայտնաբերված փողոցների անվանացույցերի և տների համարանիշերի բացակայության մասին: Շրջագայության ժամանակ հայտնաբերված բոլոր թերությունների և ուղղումների մասին ցուցակագրողը տեղեկացնում է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձին՝ ներկայացնելով գրավոր զեկուցագիր:

II ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ

11. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձից ցուցակագրողը ստանում է ցուցակագրողի վկայական, ցուցակագրման տեղամասի հատակագիծ, տնտեսությունների ցուցակների և ամփոփագրերի՝ **Ձև թիվ 1 - Աղյուսակ 1, Ձև թիվ 1-Աղյուսակ 2**, բավարար քանակությամբ ձևաթղթեր, տնտեսությունների ցուցակների կազմման վերաբերյալ **հրահանգ**:

12. Ցուցակագրողը տնտեսությունների ցուցակագրումն ըստ թաղամասերի (զանգվածների) սկսում է **Ձև թիվ 1 - Աղյուսակ 2 ձևաթղթի** լրացումից, որի հասցեամասում լրացնում է սխեմատիկ հատակագծի վրա նշված թաղամասի (զանգվածի) համարը և նկարագրում դրա սահմանները՝ պողոտաների, փողոցների, հրապարակների, նրբանցքների, փակուղիների և այլնի անվանումները և թաղամասերը շրջափակող անկյունային շենքերի համարները, ընդ որում՝ անհրաժեշտ է համապատասխան նկարագրություն

տալ նաև զանգվածների սահմանների վերաբերյալ: Եթե տնտեսությունների ցուցակները կազմվում են փողոցի կամ նրա մի մասի համար, ապա հասցեամասում գրվում է դրա անվանումը, իսկ սահմանների նկարագրման մասում՝ ցուցակի մեջ մտցված առաջին և վերջին տների համարները:

13. Եթե մեկ թաղամասի տնտեսությունների ցուցակների լրացման համար օգտագործվում են մի քանի թերթեր, ապա թաղամասի (զանգվածի) համարը, հասցեն և սահմանների նկարագրությունը լրացվում են միայն առաջին թերթի վրա, իսկ մնացած թերթերի վրա լրացվում է միայն թաղամասի համարը (սխեմատիկ հատակագծի վրա նախապես համարակալված) և էջակալվում (օրինակ՝ էջ 2, էջ 3 և այլն):

14. **Ձև թիվ 1 - Աղյուսակ 2-ում** գրանցվում են տվյալ թաղամասի (զանգվածի) տարածքում գտնվող բոլոր տները (շինությունները), ինչպես նաև հիմնարկների, կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենքերն ու շինությունները, որտեղ բնակվում կամ կարող է բնակվել տնտեսություն:

15. Թաղամասից (զանգվածից) դուրս, այսինքն՝ դրանից որոշակի հեռավորության վրա գտնվող տներում բնակվող տնտեսությունների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են այն թաղամասի, (զանգվածի) ցուցակի մեջ, որին ավելի մոտ են և գետեղվում են ցուցակում՝ թաղամասի (զանգվածի) բոլոր տները գրանցելուց հետո աղյուսակի 10-րդ՝ «Ծանոթություն», բաժնում «Թաղամասից (զանգվածից) դուրս» նշումով: **Ցուցակում** անհրաժեշտ է ներառել նաև այն տարածքները, որտեղ կատարվում են բնակելի և ոչ բնակելի կառույցների շինարարություն, քանի որ փորձնական գյուղատնտեսական հաշվառման անցկացման պահին այդտեղ շինարարությունը կարող է ավարտված լինել, իսկ շինությունը՝ բնակեցված: Թաղամասում շրջագայության ժամանակ ցուցակագրողը պարտավոր է մտնել նաև թաղամասի ներսը՝ թաղամասի ներսում գտնվող տների բացթողումից խուսափելու համար:

16. Յուրաքանչյուր տնտեսության վերաբերյալ տեղեկությունները ցուցակում գրվում է առանձին տողով: Ընդ որում, թաղամասի (զանգվածի) ներսում գտնվող տները նշվում են համապատասխան փողոցում դրանց համարակալման կարգով:

17. **Ձև թիվ 1 - Աղյուսակ 2-ը** լրացվում է տները (շինությունները) շրջագայելու ժամանակ:

18. **Ձև թիվ 1 - Աղյուսակ 2-ում** լրացվում են.

- 1) 1-ին սյունակում՝ թաղամասի սահմանում տվյալ շինության հերթական համարը՝ ըստ դասավորվածության,
- 2) «Ա» սյունակում գրվում է հասցեն՝ պողոտայի, փողոցի անվանումը և տան համարը,
- 3) «Բ» սյունակում նշվում է տնտեսության գլխավորի կամ սեփականատիրոջ ազգանուն-անունը: Ընդ որում, եթե միևնույն

փոստային հասցե ունեցող տանը (մեկ կամ միևնույն հասցե ունեցող մեկից ավել շինությունում) ապրում են մի քանի տարբեր գլխավոր ունեցող տնային տնտեսություններ, ապա դրանցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է գրել առանձին տողերով՝ աղյուսակի 1-ին սյունակի համապատասխան տողում փոխելով հերթական համարը:

4) 2-9 սյունակները լրացվում են տնտեսությանը հարցում անելով և համապատասխան սյունակներում նշումներ կատարելով: Ընդ որում, 2-րդ և 4-9-րդ սյունակները լրացնելիս անհրաժեշտ է համապատասխան (-) կամ (+) նշաններ դնել ցուցանիշի առկայության կամ բացակայության պարագայում, իսկ 3-րդ սյունակի լրացման ժամանակ հնարավոր է մեկից ավելի պատասխաններ, որոնք թվարկելիս անհրաժեշտ է համապատասխան ծածկագրերն իրարից տրոհել ստորակետերով:

19. Կառուցվող բնակելի և ոչ բնակելի շինությունների, ինչպես նաև փակ շինությունների համար «Ա» սյունակում գրառվում է տան համարը (համարի բացակայության դեպքում դրվում է գծիկ), «Բ» սյունակում նշվում է տան սեփականատիրոջ ազգանունն ու անունը (տեղեկատվության բացակայության դեպքում կարելի է նշել՝ «հայտնի չէ»), մնացած սյունակներում դրվում է գծիկ, իսկ 10-րդ՝ «Ծանոթություն», սյունակում կատարում համապատասխան նշումներ, օրինակ՝ գրվում է. «Շինությունը կառուցվում է», «Կատարված է հողահատկացում», «Մարված ծուխ», «Մարդ չի բնակվում» և այլն:

20. Ցուցակագրման տեղամասի բոլոր տները (շինությունները) շրջագայելուց և ըստ բոլոր թաղամասերի (զանգվածների) ցուցակները կազմելուց հետո, ցուցակագրողը ցուցակների տվյալները համեմատում է իր տեղամասի հատակագծի հետ, որի վրա շրջագայության ժամանակ կատարվել են բոլոր փոփոխություններն ու ուղղումները: Համոզվելով, որ բոլոր տնտեսությունները գետեղված են ցուցակում՝ ցուցակագրողն ըստ յուրաքանչյուր թաղամասի (զանգվածի) հաշվում է 1-ին (տնտեսությունների քանակը՝ ներառյալ կառուցվող), Ա և Բ սյունակների հանրագումարները և դրանք գրում տվյալ թաղամասի համար կազմված ցուցակի/ցուցակների վերջին էջի վերջին տողում՝ ընդգծելով առանձանացնելով տվյալ տողը:

21. Այնուհետև կազմվում է **Ձև թիվ 1 - Աղյուսակ 1-ը**՝ ցուցակագրման տեղամասում տնտեսությունների ցուցակների ամփոփագիրը (ամբողջությամբ ցուցակագրման տեղամասի համար)՝ այնտեղ լրացնելով յուրաքանչյուր ցուցակագրման թաղամասի (զանգվածի) հանրագումարները:

22. Ձև թիվ 1 - Աղյուսակ 1-ի՝

1) 1-ին սյունակում գրվում է ցուցակագրման թաղամասի հերթական համարը,

- 2) 2-րդ սյունակում՝ թաղամասի (զանգվածի) համարը, որը պետք է համապատասխանի Աղյուսակ 2-ի հասցեամասի համապատասխան նշմանը,
- 3) 3-րդ սյունակում գրվում է Աղյուսակ 2-ի «Ա» սյունակի հասցեների տողերի քանակը,
- 4) 4-րդ սյունակում նշվում է Աղյուսակ 2-ի «Բ» սյունակում գրառված տնտեսությունների քանակը,
- 5) 5-րդ սյունակում Աղյուսակ 2-ում հաշվված տվյալ թաղամասում չբնակեցված տների քանակը,
- 6) 6-րդ սյունակը Աղյուսակ 2-ի 2-րդ սյունակում համապատասխան տողերում (+) նշանով նշված տնտեսությունների թվի հանրագումարն է,
- 7) 7-րդ սյունակում Աղյուսակ 2-ի 9-րդ սյունակից առանձնացվում և նշվում է այն տնտեսությունների հանրագումարը, որոնք ունեն տնամերձ և/կամ գյուղ. նշանակության հողեր այլ համայնքներում:
- 8) 8-րդ սյունակը Աղյուսակ 2-ի 4-րդ, 5-րդ, 6-րդ կամ 7-րդ սյունակներից որևէ մեկում, երկուսում կամ նրանցից յուրաքանչյուրում (+) նշանով նշված տնտեսությունների թվի հանրագումարն է,
- 8) 9-րդ սյունակը՝ Աղյուսակ 2-ի 9-րդ սյունակում (+) նշանով նշված տնտեսությունների թվի հանրագումարն է:

23. Ցուցակագրողները տների ցուցակները՝ Ձև թիվ 1- Աղյուսակ 2 և ամփոփագիրը՝ Ձև թիվ 1- Աղյուսակ 1, ձևաթղթերը, ճշգրտված սխեմատիկ հատակագծերի հետ հանձնում են ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձին՝ **մինչև 2013 թվականի նոյեմբերի 1-ը**: Նշված փաստաթղթերի ստուգումից և ընդունումից հետո ցուցակագրողը և ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձը ստորագրում են այն և նշում ընդունման ամսաթիվը:

Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Դ

Ցուցակագրաման տեղամասում տնտեսությունների ցուցակների

Մարզ -----Տարածաշրջան-----Համայնք-----
(քաղաք/գյուղ)

Ցուցակագրաման տեղամաս -----

Տեղամասում թաղամասերի քանակը-----

Հերթական համարը	Թաղամասի (զանգվածի) համարը	Թաղամասում տների քանակը	Դրանցում տնտեսությունների քանակը	Տներ, որտեղ տնտեսություններ չեն բնակվում	Տնտեսությունների քանակը, որոնք ունեն			
					տնամերձ և/կամ գյուղ. նշանա- կության հողեր	տնամերձ և/կամ գյուղ. նշանա- կության հողեր այլ համայնք- ներում	գյուղատն- տեսական կենդա- նիներ	գյուղ. տեխնիկա
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
Ընդամենը								

Ցուցակագրող -----
(ստորագրություն)

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու ----- «-----» ----- 2013թ.
(ստորագրություն)

Ց ՈՒ Ց Ա Կ
Թաղամասում (զանգվածում) տնտեսությունների

Մարզ -----

Թաղամասի (զանգվածի) սահմանների նկարագրությունը

Տարածաշրջան-----

Համայնք -----
քաղաք/գյուղ

Ցուցակագրման տեղամաս ----- Թաղամաս (զանգված) -----

Ուշադրություն՝ 2-րդ և 4-9-րդ սյունակները լրացնելիս ցուցանիշի առկայության դեպքում դրվում է (+) նշանը, բացակայության դեպքում՝ (-) նշանը, իսկ 3-րդ սյունակի լրացման ժամանակ հնարավոր է մեկից ավելի պատասխան, համապատասխան ծածկագրերը տրոհել ստորակետով:

h/ h	Հասցե	S/S գլխավորի կամ սեփականատիրոջ ազգանուն անունը	Տնամերձ և/կամ գյուղ. նշանակության հողերի առկայությունը՝ անկախ սեփականության ձևից	Տիրապետման և օգտագործման տեսակը՝ <i>սեփական հող, որը նշակվում է - 1, տրված է վարձակալության - 2, վարձակալված հող - 3</i>	Գյուղատնտեսական կենդանիների առկայությունը				Գյուղ. տեխնիկայի առկայությունը	Տնամերձ և/կամ գյուղ. նշանակության հողերի առկայությունը այլ համայնքներում	Ծանոթություն
					խոշոր եղջերավոր անասուններ	խոզեր	ոչխարներ և այծեր	թռչուններ			
<i>1.</i>	<i>Ա.</i>	<i>Բ</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>	<i>10.</i>

h/ h	Հասցե	S/S գլխավորի կամ սեփականատիրոջ ազգանուն անունը	Տնամերձ և/կամ գյուղ. նշանա- կության հողերի առկայությ ունը՝ անկախ սեփական ության ձևից	Տիրապետման և օգտագործման տեսակը՝ <i>սեփական հող, որը նշակվում է - 1, տրված է վարձա- կալության - 2, վարձակալված հող - 3</i>	Գյուղատնտեսական կենդանիների առկայությունը				Գյուղ. տեխնի- կայի առկա- յությ ունը	Տնամերձ և/կամ գյուղ. նշանա- կության հողերի առկայությ ունը այլ համայնք- ներում	Ծանոթու- թյուն
					խոշոր եղջերա- վոր անասուն- ներ	խոզեր	ոչխար- ներ և այծեր	թռչուն- ներ			
<i>1.</i>	<i>Ա.</i>	<i>Բ</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>	<i>10.</i>

Ցուցակագրող -----

(ստորագրություն)

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության
տարածքային բաժնի պատասխանատու -----

(ստորագրություն)

«-----» ----- 2013թ.